



ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ և ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ (Պլան)
2021-2025 թթ.**



ԵՐԵՎԱՆ

Հ ա ս տ ա տ վ ա ծ է
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարանի Հոգաբարձուների խորհրդի
2020թ. _____ -ի նիստում

*Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն*

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային
համալսարան*

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(Պլան)

2021-2025 թթ.



ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	0
ՌԵԿՏՈՐԻ ՈՒՂԵՐՁ	2
ՆԱԽԱԲԱՆ	2
ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ	3
ՏԵՍԼԱԿԱՆ	3
ԱՐԺԵՔՆԵՐ	3
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ	5
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	5
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	9
ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ	12
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	15
ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ	19



ՌԵԿՏՈՐԻ ՈՒՂԵՐՁ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն իր գործունեությունը սկսել է 1921 թվականից՝ հանդիսանալով առանձին ֆակուլտետ Հայաստանի Պետական Համալսարանի կազմում: Անցնելով զարգացման երկար ուղի՝ այն դարձավ ճարտարապետության և շինարարության ոլորտների կրթության և գիտության նշանակալի կենտրոն:

2021-2025թ.թ. մեր ռազմավարական ծրագիրը, որը մշակել ենք բոլոր շահագրգիռ կողմերի հետ համագործակցելով, նախանշում է այն հիմնական ուղիները, որոնցով շարժվելու ենք առաջիկա հինգ տարիների ընթացքում:

Այսօր համալսարանն ունի ճարտարապետության, շինարարության և հարակից ոլորտներում մասնագիտացված պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որի մեծ մասն ունի գիտական աստիճան և կոչում: Համալսարանում աշխատում են միջազգային և տարածաշրջանային գիտական և կրթական համայնքում հայտնի գիտնականներ և դասախոսներ:

Համալսարանի գործունեությունն ուղղված է երիտասարդների կրթմանը, որպեսզի նրանք դառնան առաջատար մասնագետներ ճարտարապետության, դիզայնի, քաղաքաշինության, արդյունաբերական և քաղաքացիական օբյեկտների շինարարության, նախագծի կառավարման, գեոդեզիայի, օդափոխության, ջերմամատակարարման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, շինարարական նյութերի, քաղաքային տնտեսության և հարակից այլ ոլորտներում: Մեր հիմնական խնդիրներից է պատրաստել ազգային և միջազգային շուկաներում պահանջված, ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային արժեքները գնահատող և այլ մշակույթը հարգող, առաջնորդին բնորոշող հատկություններ ունեցող մրցունակ և որակյալ մասնագետներ:

Տեխնոլոգիական և տեխնիկական նվաճումների շնորհիվ համալսարանը ձգտելու է դառնալ տարածաշրջանի ճարտարապետության և շինարարության ոլորտների առաջատար համալսարաններից մեկը: Մենք կձգտենք բարելավել համալսարանի ակադեմիական և գիտական ցուցանիշները երկրում, տարածաշրջանում և միջազգային համայնքում՝ առաջատար նշանակությունը պահպանելու նպատակով:

Ես համոզված եմ, որ շնորհիվ մեր հետագա փոխգործակցված և արդյունավետ աշխատանքի, մեր համալսարանը կդառնա հասարակությունում նշանակալի ազդեցություն ունեցող, առաջատար համալսարաններից մեկը երկրում և տարածաշրջանում: Ես հավատում եմ, որ համալսարանն ավելի ակտիվ կարձագանքի ինչպես մեր երկրի գիտական և կրթական կարիքներին, այնպես էլ հասարակության առջև ծառայած բազմաթիվ այլ մարտահրավերներին:

ՃՀՀԱՀ Ռեկտոր՝ Ե.Վարդանյան

ՆԱԽԱԲԱՆ

Համալսարանի ռազմավարական ծրագիրը (պլանը) (այսուհետ՝ ծրագիր) սահմանում է հետագա զարգացման ռազմավարական առաջնահերթությունների շրջանակը համալսարանի և նրա ստորաբաժանումների համար: Ծրագրի մշակումն իրականացվել է համալսարանի բոլոր ստորաբաժանումների, ինչպես նաև առանցքային գործընկերների, շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների խորհրդատվությամբ և մասնակցությամբ: Ծրագրի հիման վրա համալսարանի ստորաբաժանումները կմշակեն ավելի մանրամասն գործողությունների պլան ըստ տարիների:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի առաքելությունն է՝ ճարտարապետության, շինարարության, դիզայնի, քաղաքային տնտեսության, էկոլոգիայի, կառավարման և տեխնոլոգիայի ոլորտներում՝ միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, եռաստիճան կրթական համակարգով մասնագետների պատրաստումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը:

ՏԵՍԼԱԿԱՆ

Համալսարանի տեսլականն է՝ ձևավորված ավանդույթների հիմքի վրա կառուցել մրցունակ ուսումնագիտական ճկուն համակարգ, որտեղ պատրաստվում են ժամանակակից տեխնոլոգիաներին տիրապետող, սոցիալական պատասխանատվությամբ, ազգային արժեքները գնահատող և մշակույթը հարգող, առաջնորդին բնորոշող հատկություններ ունեցող մրցունակ և որակյալ մասնագետներ, որտեղ նորարարությունը, համագործակցությունը և ժողովրդավարական սկզբունքներն առանցքային են և ունակ հասարակության առջև ծառայած մարտահրավերներին և խնդիրներին համապատասխան մասնագիտական լուծումներ տալու:

ԱՐԺԵՔՆԵՐ

Արժանապատիվ միջավայր և հարգանք. Համալսարանն առաջնորդվում է ակադեմիական և գործարար բարեվարքության (էթիկա) սկզբունքներով՝ հավասար պայմաններ ստեղծելով բոլորի համար, երաշխավորելով ակադեմիական ազատությունն ու ազնվությունը, պահպանելով լայնախոհությունը, հարգելով խղճի, դավանանքի և մտքի ազատության հիմնարար սկզբունքները, ընդունելով ու արժևորելով յուրաքանչյուրի յուրահատկությունն ու անհատականությունը:

Համառություն և գերազանցություն. Համալսարանն առավելագույն ջանքերն է գործադրում իր նախանշած նպատակներին հասնելու և բարձր որակ ապահովելու

համար՝ շարունակաբար բարելավելով և խթանելով համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում անհատական և կոլեկտիվ ներդրումներն ու ձեռքբերումները:

Սոցիալական պատասխանատվություն և առաջնորդություն. Համալսարանը սոցիալական պատասխանատվություն է զգում հասարակության և պետության առջև ծառայած խնդիրների համար և շահավետ լուծումներ է գտնում՝ միննույն ժամանակ պատրաստելով ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակ մասնագետներ, ովքեր կարող են ինքնուրույն լուծել խնդիրները և, ոգեշնչելով այլոց, փոխել իրենց միջավայրը դեպի լավը:

ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21-րդ դարում տնտեսության զարգացման ժամանակակից պահանջներն ուղղակիորեն պայմանավորված են գիտատար ճյուղերի՝ այդ թվում ճարտարապետության և շինարարության ներուժի համախմբմամբ և արդիականացմամբ: ՃՇՀԱՀ-ը հանդիսանում է մասնագիտական ոլորտներում եռաստիճան կրթական համակարգով մասնագիտական կադրեր թողարկող միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը հանրապետությունում: Համալսարանն իր գիտակրթական գործունեությունն իրականացնում է ճարտարապետության, Շինարարության, Դիզայնի, Քաղաքային տնտեսության և էկոլոգիայի, Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետների միջոցով և ունի հետևյալ հավակնությունները.

ՃՇՀԱՀ կրթական հավակնությունները.

- Ազգային և միջազգային աշխատաշուկայի պահանջներով և չափանիշներով պայմանավորված որակյալ և մրցունակ կրթական ծրագրերի իրականացում:

ՃՇՀԱՀ գիտական հավակնությունները.

- Միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, նորարարական լուծումների առաջադրում և առևտրայնացում:

ՃՇՀԱՀ միջազգային հավակնությունները.

- Միջազգային հեղինակավոր բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում, գիտակրթական ծրագրերին մասնակցություն (այդ թվում համակարգողի կարգավիճակով), կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում, օտարերկրացի ուսանողների թվի ավելացումում:



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով իր եզակի և պատասխանատու դերը սովորողների ուսումնառության կազմակերպման գործընթացում՝ համալսարանը, շարունակաբար բարելավելով իր կրթական ծառայությունները, ապահովում է ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին բավարարող կրթության այնպիսի որակ, որը սովորողներին կզինի անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով:

Նպատակ 1.

Ուսանողակենտրոն էկոհամակարգի ապահովում և միջազգայնորեն մրցունակ կրթական ծրագրերի իրականացում

Խնդիրներ

- 1.1. Արդյունավետ ուսումնառության ժամանակակից մեթոդների և նորարարական տեխնոլոգիաների ներդրում, կրթական էկո-միջավայրի ապահովում:*
- 1.2. Կրթության որակի բարձրացում և կրթական ծրագրերի շարունակական կատարելագործում:*
- 1.3. Ժամանակի մասնագիտական պահանջներին և ապագա միտումներին համահունչ, ազգային և միջազգային աշխատաշուկայի կարիքներին բավարարող կրթական ծրագրերի ներդրում:*

1.4. Համալսարանում գիտակրթական, կիրառական նոր ուղղությունների զարգացում.

- մշակութային ժառանգության (պատմամշակութային ճարտարապետական հուշարձանների) և միջավայրի վերականգնում, վերակառուցում և պահպանում,
- գեոմատիկա,
- շինությունների տեղեկատվական մոդելավորում (BIM):

1.5. Ոչ ֆորմալ և շարունակական կրթության համակարգի կատարելագործում:

Գործողություններ

- Մշակել կրթական ծրագրերի իրականացման մոդուլային համակարգ և կիրառել այն:
- Ներդնել դասավանդման և ուսումնառության գործընթացների կազմակերպման ցիկլային մոդել:
- Իրականացնել Համալսարանի ընդունելության պլանավորման և մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մակարդակներում:
- Մշակել ուսանողի անհատական ուսումնառության կազմակերպման մեխանիզմներ:
- Ընդլայնել նախագծի և/կամ խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտեցումների կիրառումը:
- Վերլուծել ուսումնառության վերջնարդյունքների գնահատման մեթոդները և բարելավել այն:
- Ներդնել նոր կրթական ծրագրեր պատմամշակութային ճարտարապետական հուշարձանների և միջավայր վերականգնման, վերակառուցման և պահպանման; գեոմատիկայի (GIS) և շինությունների տեղեկատվական մոդելավորման (BIM) ոլորտներում:
- Իրականացնել գործող կրթական ծրագրերի փորձագիտական գնահատում և բարելավում՝ այդ թվում ՇՏՄ (BIM) տեխնոլոգիաների կիրառմամբ, համապատասխանեցնել ուսումնառության վերջնարդյունքներն աշխատաշուկայի, ՈԱՇ-ի և ՈՈՇ-ի պահանջներին:
- Համալրել ուսումնագիտափորձարարական լաբորատորիաներն ու մասնագիտացված լսարանները ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով:
- Ընդլայնել ուսումնառության առցանց համակարգի կիրառման հնարավորությունները:
- Ուսումնառողների մոտ մասնագիտական և ընդհանրական հմտությունների զարգացման համար ներդնել ավելի երկարաժամկետ պրակտիկաներ:
- Իրականացնել կրթական ծրագրերի հավատարմագրում, այդ թվում միջազգային հավատարմագրման գործակալությունների կողմից:
- Զարգանել Համալսարանում ոչ ֆորմալ և շարունակական կրթության համակարգը և ներդնել դրա առցանց մոդելը:

- Ուսումնամեթոդական ձեռնարկների, դասագրքերի ստեղծման, ինչպես նաև համարժեք նյութերի թարգմանության համար կատարելագործել նյութական խրախուսման մեխանիզմները:
- «Տարվա դասախոս», «Տարվա ուսանող», «Տարվա առարկայական ծրագիր» անվանակարգերով ամենամյա մրցանակներ սահմանել:

Կրթության Գնահատման Առանցքային Ցուցիչներ (ԳԱՑ)

1. Ուսանողների (տեղացի և օտարերկրացի) թվի աճ (ուսանողների թիվն ըստ տարիների՝ բակալավրիատում, մագիստրատուրայում):
2. Ասպիրանտների և հայցորդների (տեղացի և օտարերկրացի) թվի աճ (ասպիրանտների և հայցերդների թիվն ըստ տարիների):
3. Ակադեմիական անձնակազմի ընդհանուր թիվն ըստ տարիների (ուսանող/դասախոս հարաբերակցության համապատասխանությունը միջազգային ընդունված ցուցանիշներին):
4. Վարչական անձնակազմի ընդհանուր թիվն ըստ տարիների (մեկ ուսանողին ընկնող վարչական աշխատողների թվի համապատասխանությունը միջազգային ընդունված ցուցանիշներին):
5. Օժանդակ անձնակազմի թիվն ըստ տարիների (մեկ ուսանողին ընկնող օժանդակ անձնակազմի աշխատողների թվի համապատասխանությունը միջազգային ընդունված ցուցանիշներին):
6. Երիտասարդ (մինչև 35 տարեկան) դասախոսների տեսակարար կշռի աճ ընդհանուրի մեջ (երիտասարդ դասախոսների թիվն ըստ տարիների):
7. Անհատական ուսումնառության մեխանիզմով սովորող ուսանողների թվի աճ:
8. Նախագծի և/կամ խնդրի վրա հիմնված ուսումնառության մոտեցումների կիրառմամբ իրականացվող դասընթացների թիվը:
9. Համալսարանի ընդունելության պլանավորման և մասնագիտական կողմնորոշման միջոցառումների հաստատված պլան-օրացույց:
10. Ներդրված նոր կրթական ծրագրերի և դրանցում ներգրավված ուսանողների թիվը:
11. Կրթական ծրագրերի իրականացման մոդուլային համակարգից, դասավանդման և ուսումնառության գործընթացների կազմակերպման ցիկլային մոդելից բավարարված ուսանողների և դասավանդող անձնակազմի թվի աճ (բավարարվածություն հայտնած հարցվողների թիվը, դրանց տեսակարար կշիռը ընդհանուր հարցվածների մեջ):
12. Համալսարանի կողմից մատուցվող կրթական ծառայությունից բավարարված ուսանողների և շրջանավարտների թվի աճ (բավարարվածություն հայտնած հարցվողների թիվը, դրանց տեսակարար կշիռը ընդհանուր հարցվածների մեջ):
13. Համալսարանում իրականացվող ոչ ֆորմալ և շարունակական կրթության կրթական ծրագրերի թիվն ըստ տարիների:

14. Համալսարանում առցանց և ոչ առցանց եղանակով իրականացվող ոչ ֆորմալ և շարունակական կրթության կրթական ծրագրերում ընդգրկված մասնակիցների թիվն ըստ տարիների:
15. Պրոֆեսորադասախոսական կազմում ներառված գիտական կոչում ունեցող դասախոսների թվի աճ (թեկնածուական թեզ պաշտպանած և դասավանդման գործընթացում ներգրավված աշխատակիցների թիվն ըստ տարիների):
16. Որակյալ դասընթացներ կազմակերպելու համար նախատեսված լաբորատորիաների/լսարանների համալրում/ընդլայնում (ներդրված գումար/նոր մակերեսներ ըստ տարիների):
17. «Տարվա դասախոս», «Տարվա ուսանող», «Տարվա առարկայական ծրագիր» անվանակարգերով ամենամյա մրցույթներին մասնակցողների քանակ:



ԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համալսարանը ձգտում է պահպանել իր առանձնահատուկ դերը ճարտարապետության, շինարարության և հարակից այլ ոլորտներում իրականացվող գիտական աշխատանքներում: Համալսարանի գիտական գործունեությունը հիմնվում է ընդլայնված գործընկերային հարաբերությունների և համագործակցության սկզբունքների վրա, ինչը նպաստում է մարդկանց բարենպաստ կյանքի համար մեծ նշանակություն ունեցող խնդիրների լուծմանը: Համալսարանի հետազոտությունները նպաստում են գիտելիքների, նորարարության և ստեղծարարության զարգացմանը:

Նպատակ 2.

Միջազգայնորեն մրցունակ գիտահետազոտական արդյունքների ստացում և կիրառում

Խնդիրներ

2.1. Համալսարանի գիտական կարողությունների ընդլայնում և զարգացում:

2.2. Երկրի կարիքներով պայմանավորված և զարգացման ծրագրերին համահունչ գիտական հետազոտությունների ընդլայնում՝ հաշվի առնելով նաև ոլորտի մարտահրավերներն ու միտումները:

2.3. Կրթություն-գիտություն/նորարարություն-արտադրություն կապի ամրապնդում:

2.4. Գիտահետազոտական և նորարարական աշխատանքներում երիտասարդների ներգրավվածության մեծացում:

2.5. Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում կրթական ծրագրերի բարելավում:

Գործողություններ

- Իրականացնել Համալսարանի գիտահետազոտական քաղաքականության շարունակական վերանայում:
- Գործընկերների հետ իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ և տեխնոլոգիական մշակումներ:
- Ընդլայնել Համալսարանի և գործընկեր հաստատությունների ու գիտական կազմակերպությունների միջև ուսանողների, պրոֆեսորդասախոսական կազմի և գիտաշխատողների շարժունության մեխանիզմները:
- Գիտամանկավարժական գործունեության մեջ բարելավել Համալսարանի շրջանավարտների ներգրավման մեխանիզմները:
- Արտերկրի գործընկեր հաստատությունների հետ համատեղ գիտական պարբերական հիմնել:
- Ամբողջացնել և համակարգել Համալսարանում իրականացված գիտահետազոտական աշխատանքների էլեկտրոնային տվյալների շտեմարանը:
- Շարունակական բարելավել ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականներում հոդվածների հրատարակման խրախուսման մեխանիզմները:
- Կատարելագործել Համալսարանի գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման և հաշվետվողականության ապահովման գործիքակազմը:
- Բարձրացնել Համալսարանում գործող լաբորատորիաների տեխնիկական հագեցվածության մակարդակը:
- Մշակել և ներդնել ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարման գործունեության արդյունավետության գնահատման (այդ թվում՝ թեզերի պաշտպանության) և լրացուցիչ խրախուսման մեխանիզմներ:
- Պարբերաբար կազմակերպել ուսանողների ներգրավմամբ ներհամալսարանական գիտահետազոտական աշխատանքների իրականացման դրամաշնորհային մրցույթներ:
- «Տարվա հետազոտություն» անվանակարգով սահմանել ամենամյա մրցանակ:
- Ընդլայնել պետական և համայնքային կառավարման մարմինների հետ համագործակցությունը ոլորտային, ճյուղային և տարածքային նշանակության առաջնահերթ և գերակա հետազոտությունների ուղղություններով:

Գիտության, հետազոտության և նորարարության Գնահատման Առանցքային Ցուցիչներ (ԳԱՑ)

1. *Արտերկրի գործընկեր հաստատությունների հետ համատեղ իրականացված հետազոտական աշխատանքների քանակ:*

2. Համալսարանի մագիստրոսական ծրագրերի դիմորդների թիվն ըստ տարիների և մասնագիտությունների:
3. Համալսարանի ասպիրանտուրա դիմորդների թիվն ըստ տարիների և մասնագիտությունների:
4. Գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող դասախոսների և աշխատակիցների թիվն ըստ տարիների:
5. Գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ (մինչև 35 տարեկան) դասախոսների և աշխատակիցների տեսակարար կշիռ (ընդհանուրի մեջ %-ով):
6. Արտերկրի գործընկեր կազմակերպությունների հետ հիմնադրված գիտական պարբերականի առկայություն, այդ պարբերականում համալսարանի հրատարակած հետազոտությունների քանակ:
7. Համալսարանում իրականացված հետազոտությունների էլեկտրոնային շտեմարանի գործառնում և շարունակական համալրում:
8. Միջազգային գիտական միջոցառումներում և համաժողովներում ներկայացված գիտական հետազոտությունների քանակ:
9. Գիտական աշխատությունների, այդ թվում հեղինակավոր միջազգային պարբերականներում տպագրման գործընթացի ընդլայնում (հոդվածների, մենագրությունների և այլ աշխատությունների թիվ ըստ տարիների) և այդ պարբերականներում տպագրվող հեղինակների համար ներքին խրախուսային հավելավճարների աճ (ըստ տարիների՝ հազ.դրամ):
10. ՃՇՀԱՀ օտարալեզու պարբերականի հրատարակում նվազագույնը տարեկան մեկ անգամ:
11. Գիտահետազոտական աշխատանքների իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցներ (ներդրվող միջոցների ծավալ, հազ.դրամ):
12. Բարձրորակ հետազոտություններ անցկացնելու համար լաբորատորիաների ընդլայնում (լաբորատորիաների թիվ/ընդհանուր մակերես, քառ.մ) կամ նոր սարքերով համալրում (ներդրված գումար, ըստ տարիների):
13. «Տարվա հետազոտություն» մրցույթին ներկայացված հետազոտությունների քանակ,
14. Ներհամալսարանական դրամաշնորհային ծրագրերին ներկայացված հետազոտությունների քանակ:
15. Պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում ներառված գերակայությունների շրջանակներում իրականացված հետազոտությունների և (կամ) նախագծային աշխատանքների քանակ,
16. Պետական կառավարման և տարածքային մարմինների առաջարկությունների հիման վրա իրականացված հետազոտական և (կամ) նախագծային աշխատանքների քանակ,
17. Արտադրության մեջ ներդրված գիտական մշակումների քանակ:



ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Միջազգայնացումը Համալսարանի համար մեծ կարևորություն ունեցող ուղղություն է, քանի որ այն մեծապես նպաստում է բուհի արդիականացմանը և ժամանակի պահանջների համապատասխանեցմանը: Միջազգայնացման գործողությունները թույլ են տալիս բարելավել և մրցունակ դարձնել կրթական ծրագրերը: Այն դրականորեն է ազդում կրթական գործընթացի զարգացման, մասնագիտական վերապատրաստման և, ընդհանուր առմամբ, կրթության որակի ապահովման վրա:

Նպատակ 3.

Համալսարանի միջազգային ճանաչման ընդլայնում և գիտակրթական միջավայրի գրավչության ապահովում

Խնդիրներ

3.1. Համալսարանում միջազգայնացմանը նպաստող քաղաքականության իրականացում:

3.2. Համալսարանում միջազգային չափորոշիչներին համապատասխան և օտարալեզու մրցունակ կրթական ծրագրերի իրականացում բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում:

3.3. Օտարերկրյա ուսանողների աշխարհագրության ընդլայնում և գրավիչ գիտակրթական միջավայրի ապահովում:

3.4. Միջազգային ակադեմիական և ոչ ակադեմիական կառույցներին անդամակցության ընդլայնում, միջազգային վարկանիշավորման համակարգերում ներգրավվածություն:

Գործողություններ

- Իրականացնել համատեղ և կրկնակի դիպլոմով կրթական ծրագրեր:
- Թիրախավորված ոլորտներում մշակել օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ:
- Բարձրացնել շարժունության ծրագրերի վերաբերյալ ուսանողների և աշխատակիցների իրազեկվածության մակարդակը:
- Գիտակրթական գործընթացներում ներգրավել հրավիրյալ դասախոսներ:
- Կազմակերպել միջազգային ամառային դպրոցներ:
- Հստակեցնել միջազգայնացման դերակատարներին տարբեր ստորաբաժանումներում և սահմանել նրանց գործառույթները:
- Կիրառել պարզևատրման մեխանիզմներ միջազգայնացման գործընթացում ներգրավելու մոտիվացիան բարձրացնելու համար:
- Արտասահմանցի ուսանողների համար սահմանել կրթաթոշակ:
- Իրականացնել համացանցային ռեսուրսների մշտական թարմացում:
- Խրախուսել ՃՇՀԱՀ-ում և ՃՇՀԱՀ մասնակցությամբ միջազգային միջոցառումները:
- Տեղական և օտարերկրյա բուհերի, շահագրգիռ այլ կողմերի, այդ թվում սփյուռքի հետ ձևավորել համագործակցության հարթակներ և համատեղ գործողություններ իրականացնել:
- Զարգացնել Համալսարանի ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների, լեզուների և ռուսաց լեզվի կենտրոնները:
- Մասնակցել միջազգային գիտակրթական ծրագրերին և միջոցառումներին:
- Օտարերկրացի ուսանողների ներգրավման ուղղությամբ իրականացնել միջոցառումներ:
- Արտերկրում Համալսարանի ներկայացուցչական գրասենյակներ ստեղծելու ուղղությամբ իրականացնել միջոցառումներ:
- Օտարերկրացի ուսանողների համար բարելավել նախապատրաստական կրթական ծրագրերը:

Միջազգայնացման Գնահատման Առանցքային Ցուցիչներ (ԳԱՑ)

1. *Գործող Միջազգայնացման հայեցակարգ:*
2. *Կրկնակի/համատեղ դիպլոմով կրթական ծրագրեր, շարժունության աճ:*
3. *Բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում գործող օտարալեզու կրթական ծրագրերի թվի աճ:*
4. *Օտարալեզու դասընթացների/մոդուլների թվի աճ:*
5. *Հրավիրյալ դասախոսների թվի աճ:*

6. *ՃՇՀԱՀ միջազգայնացման ցանց:*
7. *Միջազգային ամառային դպրոցների կազմակերպման համար հասկացվող ֆինանսական միջոցների աճ (հազ. դրամ) և մասնակիցների թիվ:*
8. *Միջազգայնացման գործընթացներում ներդրում ունեցած և խրախուսված անձանց թիվը:*
9. *Կրթաթոշակ ստացած արտասահմանցի ուսանողների թվի աճ:*
10. *Դրամաշնորհային ծրագրերին և միջազգային միջոցառումներին Համալսարանի աշխատակիցների մասնակցության թվի աճ:*
11. *Օտարերկրյա ուսանողների թիվը հասցնել ընդհանուր ուսանողական համակազմի նվազագույնը 10%-ի:*
12. *Օտարերկրացի ուսանողների կողմից նախապատրաստական կրթական ծրագրերից բավարարվածության աճ (բավարարվածություն հայտնած հարցվողների թիվը, դրանց տեսակարար կշիռը ընդհանուր հարցվածների մեջ):*
13. *Տեղական և օտարերկրյա բուհերի, շահագրգիռ այլ կողմերի, այդ թվում սփյուռքի գործընկերների հետ իրականացված կամ իրականացվող գործողությունների թիվը:*
14. *Օտարերկրյա համալսարաններում առնվազն 1 ակադեմիական շրջանում սովորող համալսարանի ուսանողների թվի աճն ըստ տարիների՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի գծով:*
15. *Համալսարանում առնվազն 1 ակադեմիական շրջանում սովորած օտարերկրյա ուսանողների թիվն ըստ տարիների՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի գծով:*
16. *Համալսարանի ֆրանկոֆոնիայի ակադեմիական նվաճումների կենտրոնից, լեզուների կենտրոնից և ռուսաց լեզվի կենտրոնից օգտվող շահառուների թիվն ըստ տարիների:*
17. *Արտերկրում Համալսարանի ներկայացուցչական գրասենյակների կամ պայմանագրային հիմունքներով Համալսարանը ներկայացնող կազմակերպությունների թիվը:*



ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համալսարանն իր գործունեության արդյունավետության բարձրացման համար, ժամանակի պահանջներից ելնելով, իրականացնում է կառուցվածքային փոփոխություններ, համապատասխան մարդկային ռեսուրսների ներգրավման և նյութական ու ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով: Կառուցվածքային բարեփոխումների նպատակը Համալսարանի հասարակական հաշվետվողականության և ինքնավարության միջև հավասարակշռության ապահովումն է՝ հանրային պատասխանատվության և հասարակական պահանջների փոփոխվող ընկալմանը համապատասխան:

Նպատակ 4.

Համալսարանում ինքնավարություն, թափանցիկություն, հաշվետվողականություն և արդյունավետ փոփոխություններ ապահովող կառավարման ժամանակակից համակարգի ներդրում

Խնդիրներ

4.1. Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ինքնավարության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում:

4.2. Գիտակրթական գործընթացների կազմակերպման պարզեցում և արդյունավետության բարձրացում:

4.3. Մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակակից համակարգի ներդրում և զարգացում:

4.4. Բարձր որակավորում ունեցող անձնակազմի հավաքագրում, ներգրավում և պահպանում:

4.5. Ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրում, ծախսերի արդյունավետության և խնայողության ապահովում:

4.6. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ համալսարանում իրականացվող գործընթացների կառավարման համակարգի ներդրում և ապահովում:

4.7. Համալսարանի ֆինանսական կայունությունն ու ինքնավարությունը ապահովող մեխանիզմների ներդրում:

4.8. Ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ստեղծում:

Գործողություններ.

- Վերլուծել և հստակեցնել ստորաբաժանումների գործառույթները, նրանց անձնակազմի օպտիմալ թիվը և որակավորումներին ներկայացվող պահանջները, սահմանել ենթակայությունը, հաշվետվողականության մեխանիզմները և ստորաբաժանումների միջև փոխադարձ կապերը:
- Մշակել ստորաբաժանումների գործառույթների կատարողական ցուցիչները և գործունեության արդյունավետության գնահատման չափանիշները:
- Զարգացնել մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման կարողությունները:
- Մշակել աշխատակիցների արդյունավետության գնահատման, խրախուսման և խթանման չափելի մեխանիզմներ:
- Աշխատակիցների համար ապահովել կարողությունների զարգացման և սոցիալական աջակցության հստակ մեխանիզմներ:
- Ներքինից վերև կարիքների գնահատման միջոցով իրականացնել ֆինանսական ռեսուրսների վերլուծություն, պլանավորում և այդ մոտեցումը կիրառել համալսարանի տարեկան բյուջեի ձևավորման գործընթացում:
- Նյութական ռեսուրսների թարմացման և ենթակառույցների բարելավման ընթացքում օգտագործել ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ:
- Ներդնել համապատասխան ծրագրային ապահովումներ, ձեռք բերել ժամանակակից սարքեր, վերապատրաստել մասնագետներ:
- Ապահովել ֆինանսական ներհույս խորհրդատվական, տեղեկատվական, նախագծային, լաբորատոր և կրթական ծառայությունների մատուցման միջոցով:
- Մասնակցել տեղական և միջազգային ծրագրերի, ներգրավել դրամաշնորհային միջոցներ և նվիրատվություններ:
- Զարգացնել Համալսարանի մարքեթինգային կարողությունները:

Կառավարման Գնահատման Առանցքային Ցուցիչներ (ԳԱՑ)

1. Համալսարանի բարելավված կառուցվածք՝ իր հաստիքացուցակով և պաշտոնի մշակված անձնագրերով:
2. Յուրաքանչյուր ստորաբաժանման հաստատված տարեկան աշխատանքային պլանը:
3. Յուրաքանչյուր աշխատակցի գործունեության տարեկան աշխատանքային կատարողական պլան, որը կազմվում է իր պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների և իր ստորաբաժանման տարեկան աշխատանքային պլանի հիման վրա՝ ստորաբաժանման ղեկավարի մասնակցությամբ:
4. Աշխատակցի տարեկան աշխատանքային կատարողականի հիմքով մշակված աշխատակիցների արդյունավետության գնահատման, խրախուսման և խթանման գործող մեխանիզմ:
5. Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման ընդլայնված գործառույթներ, որոնք իրականացվում են վերապատրաստված և որակյալ աշխատակիցների կողմից (մարդկային ռեսուրսների կառավարման ստորաբաժանման աշխատանքների գնահատման համար պարբերաբար անցկացվող հարցումների արդյունքներ):
6. Վերապատրաստման դասընթացների, գիտական կոնֆերանսների, սեմինարների, ամառային դպրոցների, աշխատաժողովների և նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպման կամ դրանցում մասնակցելու համար հատկացվող ֆինանսական միջոցների աճ (հազ. դրամ, նմանատիպ միջոցառումների մասնակիցների թիվ):
7. Դասախոսների և վարչական աշխատողների սոցիալական աջակցության ծրագրերով հատկացվող ֆինանսական միջոցների աճ (հազ. դրամ):
8. Աշխատավարձի աճ (միջին ամսական աշխատավարձի աճ, հազ. դրամ):
9. Յուրաքանչյուր ստորաբաժանման կողմից իր տարեկան աշխատանքային պլանի հիման վրա կազմված տարեկան բյուջե, որի հիմքով ձևավորվում է Համալսարանի տարեկան բյուջեն:
10. Ներդրված համապատասխան ծրագրային ապահովումներ և թվային տեխնոլոգիաներ, որոնցով իրականացվում է Համալսարանի ընդհանուր, ինչպես նաև ուսումնական գործընթացների կառավարումը:
11. Նյութական ռեսուրսների թարմացման և ենթակառույցների բարելավման ընթացքում օգտագործված ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ:
12. Ֆինանսական հոսքերի աճ՝ ըստ տարիների:
13. Այլընտրանքային ֆինանսական հոսքերի աճ: Այդ թվում.
 - Խորհրդատվական, տեղեկատվական, նախագծային, լաբորատոր և կրթական ծառայությունների մատուցման միջոցով ֆինանսական ներհոսքի ծավալ,
 - Տեղական և միջազգային ծրագրերին մասնակցության, դրամաշնորհային միջոցների և նվիրատվությունների ներգրավման միջոցով ֆինանսական ներհոսքի ծավալ:

14. Ուսանողների աջակցությանը, սոցիալական կարիքների բավարարմանը ուղղված ֆինանսական միջոցների ծավալի աճ (ըստ տարիների՝ հազ.դրամ / սոցիալական աջակցություն ստացած ուսանողների թիվն ըստ տարիների):
15. Համալսարանի աշխատակազմի խրախուսմանը և սոցիալական աջակցմանն ուղղված ֆինանսական միջոցների ծավալի աճ՝ ըստ տարիների (հազ.դրամ / սոցիալական աջակցություն ստացած աշխատակիցների թիվն ըստ տարիների):
16. Բուհի մարկետինգային քաղաքականությունն իրականացնող ստորաբաժանում:



**ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Բարձրացնելով հասարակության ներգրավվածությունը, նորարարությունների և գիտելիքների փոխանակման մշակույթը համալսարանում՝ անհրաժեշտ է ձգտել, որպեսզի համալսարանի կողմից իրականացվող գիտական հետազոտությունները և կրթական ծառայություններն ավելի մեծ նպաստ բերեն երկրի զարգացմանը: Այդ նպատակով համալսարանը համագործակցում և գործընկերային հարաբերություններ է ստեղծում պետական, մասնավոր, հասարակական կազմակերպությունների, համալսարանի շրջանավարտների և այլ շահառուների հետ:

Նպատակ 5.

Տեղական և միջազգային գործընկերների հետ կառուցողական հարաբերությունների ընդլայնում և ամրապնդում

Խնդիրներ.

5.1. Ոլորտի շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ համագործակցության ապահովում:

5.2. Ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների, այդ թվում՝ օրենսդրական դաշտի և նորմատիվ-իրավական փաստաթղթերի մշակման աշխատանքների մասնակցության ապահովում:

5.3. Հասարակությանը մասնագիտական, կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցում:

5.4. Հանրության շրջանում բուհի գիտահետազոտական և կրթական նվաճումների, իրականացվող նախագծերի և սոցիալական ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում:

5.5. Նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոնի կայացում և զարգացում:

5.6. Կարիերայի կենտրոնի զարգացում:

Գործողություններ.

- Կրթության և գիտության, ինչպես նաև ոլորտի քաղաքականությունների, իրավական-նորմատիվ փաստաթղթերի և միջոցառումների համատեղ մշակում և իրականացման աջակցում:
- Համալսարանի հաղորդակցության մեխանիզմների և կարողությունների ուժեղացում:
- Համալսարանի գիտական և կրթական նվաճումների տարածման գործում հասարակական գործիչների և քաղաքականության մշակողների ներգրավում:
- Համալսարանի կողմից ասոցիային և միջազգային մասնագիտական կազմակերպություններին, շարժումներին, նախաձեռնություններին, ծրագրերին մասնակցություն և ներգրավվածության ընդլայնում:
- Համալսարանի պաշտոնական կայքի անընդհատ թարմացում և սոցիալական մեդիայի հնարավորությունների լայն օգտագործում:
- Համալսարանի կողմից ճարտարապետության, շինարարության և այլ ոլորտներում իր կրթական և գիտական ներուժի, որպես օգտագործելի ռեսուրսի, օգտագործման ապահովում:
- Զարգացնել կարիերայի կենտրոնի կարողությունները:
- Արդյունավետ հարաբերություններ պահպանել ու զարգացնել Համալսարանի շրջանավարտների հետ, մշտադիտարկել նրանց հետաքրքրություններն ու կարիքները:
- Նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոնի կանոնադրության վերանայում և նոր ռազմավարական ծրագրի ու համապատասխան գործողությունների պլանի հաստատում:
- Ստարտափների զարգացում:
- Տարբեր մեխանիզմների ներդրմամբ ուսանողների, նրանց ընտանիքների և հասարակության լայն շրջանների մոտ բարեգործության մշակույթի սերմանում:

➤ Համալսարանի կողմից արտաքին շահակիցների (պետական, համայնքային, հասարակական և մասնավոր կազմակերպություններ) համար փորձագիտական, հետազոտական և խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Ներգրավվածության, համագործակցության և սոցիալական պատասխանատվության գնահատման առանցքային ցուցիչներ (ԳԱՑ)

1. Պետական կառավարման մարմիններին մատուցված խորհրդատվության ծավալ, կրթության և գիտության, ինչպես նաև ոլորտի օրենսդրական բացերի վերաբերյալ մշակված իրավական-նորմատիվ փաստաթղթերի և առաջարկների քանակ:
2. Հանրության մոտ համալսարանի գործունեության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի աճ՝ ըստ հարցումների:
3. Համալսարանի մասնակցությամբ իրականացվող համատեղ գործողությունների, նախաձեռնությունների, ծրագրերի (դրամաշնորհային և փոխանակման ծրագրերը ներառյալ) քանակն ըստ երկրների և բուհերի:
4. Համալսարանի պաշտոնական կայքից օգտվողների և դրականորեն արձագանքողների թիվը և հարաբերակցությունն ըստ տարիների:
5. Օտարերկրյա համալսարաններում գիտական հետազոտությամբ զբաղվող համալսարանի աշխատակիցների, դասախոսների, ասպիրանտների թիվն ըստ տարիների:
6. ԲՈՒՀ-ում օտարերկրյա համալսարաններից գիտական հետազոտությամբ զբաղված աշխատակիցների, դասախոսների, ասպիրանտների թիվն ըստ տարիների:
7. Օտարերկրյա համալսարաններ աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով մեկնած աշխատակիցների թիվը (ըստ տարիների):
8. Համալսարան աշխատանքային փորձ ձեռք բերելու նպատակով ժամանած աշխատակիցների թիվը (ըստ տարիների):
9. Համալսարանի կարիերայի կենտրոնի ընդլայնված գործառույթներ, որոնք իրականացվում են վերապատրաստված և որակյալ աշխատակիցների կողմից (կարիերայի կենտրոնի աշխատանքների գնահատման համար պարբերաբար անցկացվող հարցումների արդյունքներ):
10. Նորարարությունների և ձեռներեցության աջակցման կենտրոնին ֆինանսական աջակցության աճ:
11. Նորարարական գաղափարների մրցույթների կազմակերպում, ներկայացված ստարտափ գաղափարների քանակ:
12. Ֆինանսական աջակցություն և նվիրատվություն տրամադրած անձինք ըստ երկրների:
13. Համալսարանի կողմից մատուցվող փորձագիտական, հետազոտական և խորհրդատվական ծառայությունների թիվը, գումարը: